

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՄՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
2011Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍԻՆ

ԹԻՎ 5

Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հունվար-մայիսին

(%)

	2011թ.								
	հուն-վարը	փետր-վարը	մարտը	ապրիլը	մայիսը	մայիսը			հունվար-մայիսը 2010թ.
	նախորդ ամսվա նկատմամբ					2010թ. դեկտեմբերի նկատմամբ	2010թ. մայիսի նկատմամբ	2010թ. նկատմամբ	հունվար-մայիսի նկատմամբ
Սպառողական գների ինդեքսը՝ ընդամենը	103.4	100.9	100.8	99.8	100.0	105.0	109.0	109.4	110.2
այդ թվում՝									
Սպառման ապրանքներ	104.8	100.7	100.8	99.7	100.1	106.1	111.9	111.9	112.3
Պարենային ապրանքներ	106.7	100.9	100.9	99.4	100.0	108.0	116.2	116.0	116.5
Ոգելից խմիչք, ծխախոտ	100.1	100.0	100.0	100.0	100.0	100.2	100.4	100.5	100.7
Ոչ պարենային ապրանքներ	100.2	100.2	100.5	100.5	100.5	102.0	102.4	102.9	103.1
Ծառայություններ	100.1	101.4	100.9	100.0	99.9	102.3	102.5	103.7	105.4


Սպառողական գներ: 2011թ. մայիսին ապրիլի նկատմամբ ՀՀ սպառողական շուկայում գրեթե կրկնվել է նախորդ ամսվա գների ընդհանուր մակարդակը, սակայն գնաճային միտումով (արձանագրվել է 0.04% գնաճ): Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների ընդհանուր մակարդակը նշված ժամանակահատվածում մնացել է անփոփոխ, ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.5%-ով, իսկ ծառայությունների ոլորտում գրանցվել է սակագների 0.1% նվազում:

2011թ. մայիսին 2010թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 105.0%, այդ թվում պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 107.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.0%, ծառայությունների սակագներինը՝ 102.3%:

2011թ. հունվար-մայիսին սպառողական գների միջին ամսական հավելվածը կազմել է 0.98%, ինչը 0.06 տոկոսային կետով ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (1.04):

Սպառողական գների հավելվածը 2002-2011թթ. մայիսին

(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ.%)



2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 109.0%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 114.7%, ոչ պարենային ապրանքներինը՝ 102.4%, ծառայությունների սակագներինը՝ 102.5%, իսկ հունվար-մայիսին 2010թ. հունվար-մայիսի համեմատ՝ համապատասխանաբար 110.2%, 115.0, 103.1 և 105.4%:

2011թ. մայիսին 2010թ. համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 109.4%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 114.5%. ոչ պարենային ապրանքներինը՝ 102.9%, ծառայությունների սակագներինը՝ 103.7%:

Հանրապետության դիտարկվող 6 քաղաքներում 2011թ. մայիսին ապրիլի համեմատ գրանցվել է սպառողական գների 0.1-0.7% գնաճ, 3-ում՝ 0.5-0.1% գնանկում, իսկ 2-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Մայրաքաղաքում սպառողական գները նվազել են 0.1%-ով:

Պարենային ապրանքների գներ: 2011թ. մայիսին ապրիլի համեմատ պարենային ապրանքների արձանագրված գների անփոփոխ ընդհանուր մակարդակի պայմաններում որոշ ապրանքատեսակների գներն ունեցել են աճման, իսկ որոշ ապրանքատեսակների գներ՝ նվազման միտում: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 7-ում նշված ժամանակահատվածում արձանագրվել է 0.1-1.3% գնաճ, 3-ում՝ 2.1-0.2% գնանկում, իսկ մյուս 3-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է շաքարավազի 7.8%, իսկ 2011թ. ապրիլի համեմատ՝ 1.3% գնաճ: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2011թ. մայիսին ապրիլի համեմատ շաքարավազի գինն աճել է 0.4-3.7%-ով, ընդ որում, գնաճի ամենաբարձր ցուցանիշներն արձանագրվել են Հրազդան, Չարենցավան քաղաքներում: Մայրաքաղաքում շաքարավազի գինն աճել է 0.7%-ով:

Կենդանական և բուսական յուղերի ապրանքախմբում 2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ գրանցվել է 17.6%, իսկ 2011թ. ապրիլի համեմատ՝ 1.1% գնաճ: Վերջինս մեծապես պայմանավորվել է մարգարինի՝ 2.8% և այլ յուղերի (հալած յուղ) 4.2% գնաճով: 2011թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում արձանագրվել է բուսական յուղի (արևածաղկի) 0.7%, կարագի՝ 0.9%, բուսական յուղի (եգիպտացորենի) 1.0% գնաճ: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում կենդանական և բուսական յուղերի գներն աճել են 0.4-2.7%-ով, մեկում գրանցվել է 0.3% գնանկում, իսկ մյուսում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մրգի ապրանքախմբում՝ 2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ արձանագրվել է 19.9%, իսկ 2011թ. ապրիլի համեմատ՝ 0.8% գնաճ: 2011թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում գրանցվել է տանձի 3.6%, նարնջի՝ 4.4%, խաղողի 10.4%, մանդարինի՝ 11.8% գնաճ: Միաժամանակ, ելակի գինը նվազել է 10.6%-ով, ադամաթզինը՝ 2.2%-ով, խնձորինը՝ 1.3%-ով, կիտրոնինը՝ 0.1%-ով: Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում մրգի գներն աճել են 0.2-5.8%-ով, իսկ ք. Վաղարշապատում արձանագրվել է 3.1% գնանկում: Մայրաքաղաքում մրգի գներն աճել են 0.7%-ով:

Սսամթերքի ապրանքախմբում 2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ գրանցվել է 9.0%, իսկ 2011թ. ապրիլի համեմատ՝ 0.5% գնաճ: Վերջինս հիմնականում պայմանավորվել է խոզի մսի 3.7% թանկացումով: 2011թ. մայիսին ապրիլի համեմատ տավարի մսի գինն աճել է 0.1%-ով, իսկ ոչխարի մսի գնի մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2011թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է մսամթերքի 0.1-3.3% գնաճ, մեկում՝ 0.7% գնանկում, իսկ մյուսում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում մսամթերքի գներն աճել են 0.4%-ով:

Կաթնամթերքի ապրանքախմբում 2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ գրանցվել է 22.4%, իսկ 2011թ. ապրիլի համեմատ՝ 0.5% գնաճ: Վերջինս մեծապես պայմանավորվել է մածունի՝ 0.6% , թթվասերի 0.6% , կաթնաշոռի 0.6% , «Չանախ», «Լոռի» և «Չեդեր» պանիրների՝ համապատասխանաբար 1.1%, 1.1% և 1.7% գնաճով: Հանրապետության դիտարկված 5 քաղաքներում 2011թ. մայիսին ապրիլի համեմատ գրանցվել է 0.2-4.9% գնաճ, 3-ում՝ 0.5-0.3% գնանկում, իսկ մյուս 3-ում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2011թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է սուրճի, թեյի, կակաոյի և հրուշակեղենի՝ համապատասխանաբար 0.1% և 0.2% գնաճ:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում՝ 2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ արձանագրվել է 35.4% գնաճ, իսկ 2011թ. ապրիլի համեմատ՝ 2.1% գնանկում: 2011թ. մայիսին ապրիլի

¹ 2011թ. ապրիլ-մայիսին 2010թ. ապրիլ և մայիս ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների և գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:

համեմատ հանրապետությունում գրանցվել է վարունգի 61.6%, զլուխ սոխի 18.9%, խառը կանաչեղենի 11.1%, սմբուկի 7.6%, կանաչ սոխի 7.4%, լոլիկի 5.8%, կանաչ պղպեղի 3.3% գնանկում: Դրան գուզընթաց, սխտորի գինն աճել է 7.7%-ով, գագարինը՝ 8.1%-ով, կաղամբինը՝ 10.9%-ով, կարտոֆիլինը՝ 17.1%-ով, ճակնդեղինը՝ 36.6%-ով: Դիտարկված 9 քաղաքներում բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գները նվազել են 9.6-0.3%-ով, իսկ մյուս 2-ում գրանցվել է 1.2-4.9% գնաճ: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գների ընդհանուր մակարդակը նախորդ ամսվա համեմատ նվազել է 2.3%-ով:

2011թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետությունում գրանցվել է ձկնամթերքի 0.2%, այլ մթերքի 0.2% գնանկում, իսկ հացամթերքի, ոչ ոգելից խմիչքի, ձվի, ոգելից խմիչքի և ծխախոտի ապրանքախմբերում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել են անփոփոխ:

Ոչ պարենային ապրանքների գներ: 2011թ. մայիսին ապրիլի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցված 0.5% գնաճը հիմնականում պայմանավորվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 5.2% և 4.2% գնաճով: 2011թ. մայիսին 2010թ. մայիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գներն աճել են համապատասխանաբար 13.7% և 21.6%-ով, իսկ 2010թ. դեկտեմբերի համեմատ՝ 21.1% և 24.9%-ով:

2011թ. մայիսին ապրիլի համեմատ գրանցվել է գորգեղենի 0.1%, հագուստի և գործվածքի 0.3%, շինանյութերի 0.3%, այգեգործական ապրանքների 0.4%, վառելիքի՝ 0.5%, խոհանոցային սպասքի 0.6%, տեքստիլեղենի 0.8%, կենցաղային էլեկտրաապրանքների 0.8%, կոշիկեղենի 1.0%, կահույքի 1.1%, ոսկերչական ապրանքների 5.5% գնաճ: Միաժամանակ, մշակույթի ապրանքների գները նվազել են 4.4%-ով, գեղահարդարման ապրանքներինը՝ 1.1%-ով, գրենական պիտույքներինը՝ 0.5%-ով, լվացող միջոցներինը՝ 0.3 %-ով, դեղամիջոցներինը՝ 0.2%-ով, անձնապիտո ապրանքներինը՝ 0.2%-ով:


Դիտարկված 9 քաղաքներում 2011թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է ոչ պարենային ապրանքների 0.1-2.3% գնաճ, այդ թվում, գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Դիլիջանում: Մայրաքաղաքում ոչ պարենային ապրանքների գներն աճել են 0.4%-ով, իսկ Գյումրի և Վաղարշապատ քաղաքներում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Ծառայությունների սակագներ: Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2011թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրված սակագների 0.1% նվազմանը հիմնականում նպաստել են հանգստի կազմակերպման ծառայությունների՝ 3.2%, բնակարանային-կոմունալ՝ 0.5% (անապահով ընտանիքներին մատակարարվող բնական գազի սակագների սուբսիդավորման արդյունքում բնական գազի սակագների 1.0% նվազմամբ պայմանավորված), մշակույթի ոլորտի 0.1% սակագների նվազումը: Բուժսպասարկման ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում աճել են 0.1%-ով, հանրային սննդինը՝ 0.1%-ով, իրավական ու բանկային ծառայություններինը՝ 0.6%-ով, տրանսպորտինը 0.9%-ով, իսկ կենցաղային բնույթի, կապի, կրթության համակարգի ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2011թ. մայիսին ապրիլի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.2-0.1% նվազում, մեկում՝ 0.2% գնաճ, իսկ մյուսում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում ծառայությունների սակագները նվազել են 0.2%-ով:


Ըստ գործող մեթոդաբանության. ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2011թ. մայիսի 2-ին, 10-ին և 20-ին կամ մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 11 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների զծով:

ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2011թ. հունվար-մայիսին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ.%)



Արտարժույթի շուկա: 2011թ. մայիսին ապրիլի համեմատ հանրապետության սպառողական շուկայում արձանագրված գների ընդհանուր անփոփոխ մակարդակի պայմաններում ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը (մայիսի 1-30-ի դրությամբ) աճել է 0.1%-ով (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2011թ. մայիսին 2010թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գներն ու հաշվարկային փոխարժեքն աճել են համապատասխանաբար 5.0% և 3.8%-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված՝ համապատասխանաբար 5.3% և 1.2% հավելաճի դիմաց: 2011թ. մայիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 374.12 դրամ, ինչը 2.8%-ով ցածր է 2010թ. մայիսի համապատասխան ցուցանիշից (385.0 դրամ):

ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2010-2011թթ. հունվար-մայիսին
(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ.%)



Մրցի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական միջին գները և գների ինդեքսները ՀՀ-ում և Երևան քաղաքում

	Չափի միավորը	Գների ինդեքսը ՀՀ-ում, %				այդ թվում՝					
		2011թ.				Քաղաք Երևան					
		ապրիլը		մայիսը		Միջին գին (դրամ)				գների ինդեքս, %	
		2011թ. մարտի նկատմամբ	2010թ. ապրիլի նկատմամբ	2011թ. ապրիլի նկատմամբ	2010թ. մայիսի նկատմամբ	2010թ.		2011թ.		2011թ. ապրիլը 2010թ. ապրիլի նկատմամբ	2011թ. մայիսը 2010թ. մայիսի նկատմամբ
					Սպրիլ	Մայիս	Սպրիլ	Մայիս			
Մրց. քնդամենը		98.2	130.7	100.8	119.9	x	x	x	x	125.5	113.1
<i>այդ թվում՝</i>											
Խնձոր	կգ	94.9	295.7	98.7	255.4	411	474	1123	1101	273.4	232.3
Տանձ	“_“	96.0	146.4	103.6	110.5	694	1109	1019	1056	146.7	95.2
Խաղող	“_“	104.1	110	110.4	87.8	440	656	694	837	157.6	127.7
Արևադարձային պտուղ (նարինջ)	“_“	105.0	94.9	104.4	95.3	782	805	742	754	94.9	93.6
Մանդարին	“_“	106.2	75.0	111.8	74.1	810	932	714	827	88.2	88.7
Կիտրոն	հատ	100.0	103.5	99.9	103.3	194	195	205	205	105.5	105.6
Աղամաթուզ (բանան)	կգ	88.7	100.2	97.8	100.8	931	901	952	931	102.2	103.4
Բանջարեղեն և կարտոֆիլ, քնդամենը		94.7	128.3	97.9	135.4	x	x	x	x	129.1	132.8
<i>այդ թվում՝</i>											
Կաղամբ	կգ	120.2	260.3	110.9	216.8	111	156	280	311	251.6	199.8
Լոլիկ	“_“	84.3	87.7	94.2	98.2	1113	935	1016	951	91.3	101.8
Վարունգ	“_“	79.8	107.9	38.4	108.4	1012	390	1128	405	111.5	103.9
Գլուխ սոխ	“_“	97.0	108.5	81.1	92.3	442	421	488	390	110.2	92.5
Գազար	“_“	102.7	265.7	108.1	164.9	169	318	466	495	276.4	155.6
Սեղանի ճակնդեղ	“_“	112.0	225.8	136.6	256.2	155	177	368	535	237.7	302.1
Մխտոր	“_“	103.0	113.6	107.7	122.0	1701	1725	2062	2263	121.2	131.2
Մբուկ	“_“	98.3	76.5	92.4	87.5	1744	1382	1298	1134	74.4	82.0
Կանաչ պղպեղ	“_“	104.6	94.8	96.7	99.6	2291	2151	2125	2096	92.8	97.5
Սունկ	“_“	98.9	100.2	93.3	96.5	1650	1578	1551	1487	94.0	94.2
Կարտոֆիլ	“_“	97.1	301.5	117.1	238.9	105	164	320	370	304.4	225.7

Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում¹

(%)

	2010թ. դեկտեմբերը 2009թ. դեկտեմբերի նկատմամբ	2011թ.				ապրիլը 2010թ. դեկտեմբերի նկատմամբ
		հունվարը	փետրվարը	մարտը	ապրիլը	
		<i>նախորդ ամսվա նկատմամբ</i>				
Ավստրիա	102.2	99.9	100.8	101.2	100.6	102.6
Բելգիա	103.4	98.8	102.2	100.4	100.3	101.8
Բուլղարիա	104.4	100.5	100.6	100.4	99.9	101.3
Հունգարիա	104.6	100.9	100.4	101.0	100.7	103.1
Գերմանիա	101.9	99.5	100.6	100.6	100.3	101.0
Հունաստան	105.2	99.0	98.7	103.2	100.7	101.5
Դանիա	102.8	100.1	101.0	100.6	100.4	102.2
Իռլանդիա	99.8	99.7	100.9	100.5	100.3	101.3
Իսպանիա	102.9	98.7	100.1	102.4	100.9	102.0
Իտալիա	102.1	98.4	100.2	102.2	101.0	101.7
Վիպրոս	101.9	99.6	100.4	101.0	101.4	102.5
Լատվիա	102.4	101.3	100.3	100.7	101.1	103.4
Լիտվա	103.6	100.4	100.1	101.0	101.0	102.5
Լյուքսեմբուրգ	103.1	99.7	101.5	100.8	100.4	102.4
Մալթա	104.0	98.7	99.7	101.5	102.1	102.1
Նիդերլանդներ	101.8	99.9	100.9	101.4	100.6	102.8
Նեհաստան	102.9	101.0	100.2	100.9	100.5	102.7
Պորտուգալիա	102.4	100.5	99.9	101.6	100.6	102.6
Ռումինիա	107.9	100.8	100.8	100.6	100.7	102.9
Սլովակիա	101.3	102.1	100.3	100.4	100.5	103.3
Սլովենիա	102.2	99.6	100.0	101.4	100.7	101.7
Միացյալ Թագավորություն (Մեծ Բրիտանիա)	103.7	100.1	100.7	100.3
Ֆինլանդիա	102.8	100.4	100.8	100.6	100.2	101.9
Ֆրանսիա	102.0	99.7	100.5	100.9	100.4	101.4
Չեխիայի Հանրապետություն	102.3	100.8	100.0	100.2	100.2	101.1
Շվեդիա	102.1	99.1	100.5	100.4	100.3	100.3
Էստոնիա	105.4	100.0	100.7	100.8	100.8	102.3
Շնորհիվ Եվրամիության երկրներ (ԵՄ -27)²	102.6	99.6	100.5	101.1	100.5	101.7
Հայաստան	109.4	103.4	100.9	100.8	99.8	105.0
Ռուսաստան	108.8	102.4	100.8	100.6	100.4	104.3
Բելառուս	109.9	101.4	102.7	101.9	104.5	110.9
Ուկրաինա	109.1	101.0	100.9	101.4	101.3	104.7
Ղազախստան	107.8	101.7	101.5	100.5	100.5	104.2
Ղրղզստան	119.2	102.7	101.4	102.6	102.7	106.8
Մոլդովա	108.1	101.1	101.2	100.8	101.0	104.3
Տաջիկստան	...	101.9	101.3	101.2
Ադրբեջան	105.7	100.8	102.2	101.1	99.7	...
Վրաստան	111.2	102.1	102.8	100.0	99.9	104.8
Կանադա	...	100.3	100.3	101.1	100.3	102.0
Նորվեգիա	102.7	99.2	100.5	100.4	100.6	100.7
Բրազիլիա	105.9	100.8	100.8	100.8	100.8	103.2
Կորեայի Հանրապետություն	102.7	100.9	100.8	100.5	100.0	102.2
ԱՄՆ	101.5	100.5	100.5	101.0	100.6	102.6
Թուրքիա	106.4	100.4	100.7	100.4	100.9	102.4
Շվեյցարիա	...	100.0	100.3	100.7	100.0	101.0
Ճապոնիա	99.7	99.8	99.9	100.3

... - Տվյալները բացակայում են:

¹ Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՆ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՆ-ի կայք էջում գետեղված ցուցանիշների հիման վրա:

² Եվրամիության երկրների համար ներկայացված է միասնական մեթոդաբանությամբ և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

<<Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հունվար-հունիսին>> մամուլի հաղորդագրության հրատարակման ժամկետը, համաձայն <<2011 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի>>, նախատեսված է 2011թ. հունիսի 30-ին (տես՝ ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 62):